ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

«ՄՐԳԱՀԱՍ» ժողովածու

ՁՈՆ՝ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻՆ

Ա՜ռ ամառային այս ոսկե սինին,
Ու թող աշունը փառահե՜ղ լինի․․․

Գուրգեն Մահարի
1932.26.4
Երևան

* * *

Եկ, անգի՜ն, երգիս այգին,
Ե՜կ, այնպես զով է այնտեղ,
Ե՜կ, զգա շունչը կյանքի,
Ե՜կ, քաղիր շաղուն վարդեր։

Ե՜կ, անգի՜ն, ես քեզ համար
Պահել եմ վերջին նուռը,
Գիշե՜ր է լույս ու վարար,
Ու բաց է այգու դուռը․․․

1925 թ․

ՋՆԳԱ ԱՐԵՎԸ ԹՈՂ․․․

Ջնգա արևը թող
Իմ երգերի վրա
Ու իմ երկրի անդող
Ցերեկներին շռայլ,
Ջնգա արև թող
Խնդությամբ մի անտակ,
Իմ երգերի հորդուն
Երանգներին տարտամ։

Լինի մայիս փարթամ,
Շռայլ, անա՜փ, հորդո՜ղ,
Հասկի վրա արդար
Ջնգա արևը թո՜ղ․․․

1926 թ․

* * *

Երկրիս նման թարմ ես,
Երգի նման դու,
Հմայում ես մրգի պես,
Գրքի նման մութ։

Երգե՛ր, երգե՛ր աչքերիդ
Կիսակապույտում,
Երկրիս դաշտերը բերրի,
Մեր գյուղը տրտում։

Հին սեմին մեր խրճիթի
Մի զառ են մորթում․․․
Արյան մի շիթ շուրթիդ
Ժպտացիր դու․․․

1925 թ․

* * *

Դու հիմա հեռու ես,
Հեռո՛ւ է քո արծաթ ձայն,
Նա նորից կարկաչում է,
Բայց արդեն ո՛չ ինձ համար։
Ինձ մնաց հուր ու հրկեզ
Այս խայթը մահամնա,
Եվ արծաթ քո ձայնի արձագանքը․․․

Եվ այդ է իմ երգը հիմա․․․

1925 թ․

ԵՍ ԻՆՉՈ՞Վ ՔԵԶ ՀՄԱՅԵՄ․․․

Ես ինչո՞վ քեզ հմայեմ,-
Ոչ գանձեր ունեմ, ոչ փայլ,
Ես ոչինչ չեմ խնայել
Քո սիրո, փառքի համար։

Քո սիրուն, փառքին վայել
Չեմ գտել դեռ ոչ մի բառ․
Ես ինչո՞վ քեզ հմայեմ,-
Վարդավա՛ռ, դու վա՛րդ, դու վա՛ռ․․․

1925 թ․

ԿԱՆԱՉ ԱՐՏԵՐ ԷԻՆ․․․

Կանաչ արտեր էին,
Արահետներ փոշոտ,
Մեկտեղ գնում էինք,
Արև էր վառ ու շոգ։

Շուրջը մարգեր, հող, թուփ,
Խնդություն էր կյանքը,
Ու մեռնում էր հովտում
Կիսավերակ վանքը․․․

1925 թ․

ՀԱՐԱԶԱՏ, ԻՄ ԱՆԳԻՆ․․․

Հարազատ, իմ անգին,
Եկար ու գնացիր,
Թողիր խոհեր անծիր,
Անլուսին մի այգի
Ու անծաղիկ մի թուփ․․․

Գգվանքների մոխիր
Ու շշուկներ թողիր,
Հուշեր, շուքեր թողիր,
Ու թո՜ւյն․․․

1925 թ․

ԱՇՈՒՆՔՎԱ ԱՅԳՈՒ ՆՄԱՆ․․․

Աշունքվա այգու նման
Դեղնել են տերևներն իմ․
Ողջ կյանքից ինձ երգ մնաց,
Իմ երգը թող չմեռնի։

Հասել են բերքերն իմ վառ,
Ճեղքվել է ահա նռին,-
Թեև ուշ աշնան նման
Դեղնել են տերևներն իմ․․․

1925 թ․

ՀՈՎԵՐԳ

Երբ անձրևը դադար տա՝
Կլինեմ քո հովտում․-
Այնտեղ ամեն թփի տակ
Կա մի աղջիկ տրտում։

Կհավաքեմ ես նրանց,
Կնստենք թմբին,-
Կզրուցենք մենք ուրախ,
Մինչև օրը մթնի:

Մենք կխոսենք քո մասին,
Իսկ հետո վերից
- Հերիք,- կասի աքասին,-
Քնել տվեք ինձ:

Նրանք մշուշ կդառնան,
Անհուշ ու տարտամ,
Իսկ ես մենակ կմնամ
Այն աքասու տակ:

Իսկ լուսինը խանդոտ
Դեղին մուժ կթափի
Արոտներին անդորր,
Արտերի՜ն, արտերի՜ն:

1925 թ.

ԿԱՐՈՏ [|]

Սիրա՜ծ, ոսկե՜ աղջիկ, դեղի՜ն, հասկե՜ աղջիկ,
Աղջիկ իմ ջինջ աչքով,
Իզուր տարվեցիր դու անձրևների՜ կանչից,
Իզուր հեռացար դու. . .

Ապրում էիր պայծառ դաշտերում իմ հոգու,
Ծաղիկ էիր բացված,
Բարդու մի ծառ էիր, իմ բարդենի՜, իմ քո՜ւյր,
Իմ ծաղկավոր անցյալ. . . .

Ախ, անձրևից հետո դու ծիածան դարձար,
Շքեղ, հուր ու երահ,
Բլուրներին ընկար, արոտներին արձակ
Ու մարգերի վրա. . . .

Հետո ցնդեց այն էլ. ո՞ւր ես, սե՜ր իմ սիրած,
Ոսկեթև իմ թիթեռ,
Աղջի՞կ էիր, թե վիթ, ցնորք, մուժ ու միրաժ,
Աղջի՞կ էիր միթե. . .

Ահա օրը բացվեց լիմոնի պես լուսե
Ու նրա պես անուշ,

Ախ, էլ ոչինչ, ոչինչ իմ սիրտը չի հուզի,
Ախ, էլ ո՛չ մի անուն:

Սիրած, ոսկե աղջիկ, սիրո լուսե օրրան,
Միթե էլ չե՞ս դառնա,-
Ե՛կ, խառնվիր երգիս, այս արևոտ օրվան,
Այս ջրին ու գարնան. . .

1925 թ.

ՄԱՄՐԵՆԻ

Իմ պայծառ ընկե՛ր,
Իմ սեր մասրենի,
Ինչո՞ւ է թափվել
Մոխիր վարսերիդ:

Երգդ զվարթ էր
Սվսվում էիր,
Լսում էր վարդը
Երգերը քո հին:

Կելներ արևը
Լեռան մի ուսից,
Նրա բարևը
Կայրեր թուփ ու սիրտ:

Բարդին կնազեր
Նման հարսերի,-
Արդյոք երա՞զ էր,
Սիրո՛ւն մասրենի. . .

1925 թ.

* * *

Գառների պես սպիտա՛կ
Քո դեմ իմ հույզերը.
Սպիտա՛կ են, սպիտա՛կ
Եվ քո նուրբ ուսերը:

Դու շուրջըս հյուսել ես
Լուսեղեն մի ցանց,-
Անհո՛ւյս են հույսերըս,
Անո՛ւշ իմ ցավ:

Գիտեմ՝ կորուստ է անդարձ
Անհնար այս սերը.
Սիրում եմ քեզ, ի՛մ հանցանք,
Եվ իմ սերը սև է...

1925 թ.

* * *

Չգիտեմ՝ քե՞զ եմ սիրում,
Թե՞ իմ սերը,-
Այս սերը խոր ու խորունկ
Ինձ հուզել է:

Ո՞վ ես, ի՞նչ ես, չգիտեմ,-
Մթին հանելուկ,
Գիտե՞ս սիրել դու միթե,
Ու սիրել ո՞ւմ:

Եվ ինչո՞ւ ես այդքան դու
Սառն ու հանդարտ
Անձրևների տակ ժպտուն,
Վարդի պես վարդ:

1926 թ.

* * *

Կծերանամ մի օր ես, կծերանաս դու,
Ամեն մեկըս մեր բախտի, մեր ցավի հետ,
Կդառնա ողջ հանդարտ և իմաստուն,
Եվ գուցե այն ժամանակ հանդիպենք մենք:

Եվ գուցե մենք հանդիպենք որպես օտար,
Դու կորացած ուսերըդ դարձնես ետ,
Ու մրմնջաս ինքդ քեզ ու քեզ համար.
- Ինչքա՛ն տանջել եմ ես քեզ, ծերուկ պոետ...

Գուցե մեռած լինեմ ես, երբ դու դեռ նո՛ր
Կողջունես վառ օրերը վարար կյանքի,
Շիրմիս վրա կօրորվեն վարդեր մեռնող,
Կշշնջան անունըդ վառ ու անգին...

1925 թ.

ԱՅՍՕՐ

Այսօր կարծես դու ավելի հանդարտ ես,
Սի՛րտ անուրախ, զանգրահեր իմ մանկի՛կ,
Քեզ ժպտում է անդորրության արտը
Ու հմայքը բազմախորհուրդ կյանքի:

Այո՛, մանկի՛կ, խելոք պիտի մնաս,
Դու ուզում ես արևի շեկ գունդը,
Դու ուզում ես աստղերով լի մի թաս
Ու կապույտում ցանված լուսնահունդը...

Խելո՛ք, մանկի՛կ, խելոք, խելոք մնա,
Տե՛ս, քո երկրում նոր հունդեր են ցանվում,
Հիմա պետք չէ ո՛չ սեր, ո՛չ էլ քնար,
Ո՛չ էլ քնքշանք՝ շաղախված հին ցավով:

Թող քեզ թովի նոր օրերի վարդը,
Թո՛ղ արևը, թո՛ղ ցնորքը, անզի՛ն,-
Այսօր, այսօր դու ավելի հանդարտ ես
Սի՛րտ անուրախ, իմ զանգրահե՛ր մանկիկ...

1925 թ.

ԿԱԾԱՆ ՄԵՆԱՎՈՐ...

(Վահան Տերյանի հիշատակին)

Կածա՛ն մենավոր,
Համր հոգին իր տար
Մինչև զիրկդ անդորր,
Ու մինչև անտառ:
Հեռացավ մի օր
Այնպե՛ս անհաղորդ,
Անեզր ու դանդաղ
Մշուշի նավով,-
Ցավո՛վ հեռացավ,
Կածա՛ն մենավոր...

1926 թ.

ԴՐՍՈՒՄ ԱՆՁՐԵՎ Է...

Դրսում անձրև է, և իմ սրտում
Երգվում է մի երգ նրա պես թեն․
Իսկ նա երգում է այնքա՛ն տրտում․․․
Ես լա՞լ եմ ուզում, թե արդեն, արդեն

Արցունքի շիթեր ընկան ձեռքիս։-
Բայց ես ժպտում եմ, օ՛, գիտեմ ես՝
Կփոխվեն նրանք հետո երգի,
Ծաղիկների՛ պես, վարդերի՛ պես։

Ծաղիկների՛ պես ու վարդերի՛
Անձրևից հետո այնքա՛ն պայծառ․․․-
Երգի՛ր, անձրև՛ իմ, իմ մտերի՛մ,
Բերրի՛ արցունքներ, թափվե՛ք անձայն․․․

1926 թ․

ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ [||]

Փշատենին շշնջում է․- «Անցա՛վ․․․»
Թր թ ու ր ը օ ր ո ր վ ու մ է ․ - «Ինչպե՞ս․․․» -
- Ան ց ավ ն ա, ան ց ավ ս ե ր դ ան դ ար ձ ,
Մե ն ակ թ ո ղ ե ց , մ ե ն ակ թ ո ղ ե ց ն ա ք ե զ ։

Հ ո վ ը մ տավ թ ավ ո ւ տն ե ր ը ,- «Գտի՛ր․․․»
Մար գ ագ ե տն ի ց ձ ի ն վ ր ն ջ աց ․ - «Ո՞ւր է․․․»․
- Գնաց նա, կանչում է ա՛յլ ափից,
Չե՛ս գտնի։ Մի՛ որոնի։ Ջո՛ւր է։

Արագիլնե՛ր, կաչաղակնե՛ր, գժե՛ր,
Քեֆ արե՛ք, քանի լուսին դեռ կա,
Քամինե՛ր ծղրիդներին քշե՛ք․․․
Ծառերը պար են բռնել երկար։

Ծառերը պար են բռնել երկար,
Դրմփաց թունդ նաղարան վերից,
Ամպերը վրա-վրա եկան,
Անձրևը ծտին բռնեց գերի․․․

Անձրևը խշխշում է․- «Բերի՛․․․»

․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․

․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․

Բար դ ե ն ի ն ո ւ ր ախ ձ այ ն ե ց ․
- Եկ ա՛ վ , ե կ ա՛ վ ․ ․ ․

Այդ ո՞ւր ես, ո՞ւր ես թառել,
Անո՛ւշ բերեկամ:

Չգել ես քո հասակը,
Գույներըդ ծածան,
Դու անո՛ւշ, հարազա՛տմ իմ,
Իմ սեր-ծիածան:

. . . Այդ է՛ս եմ այդպես քշում,
Շրջում եմ լեռներ,-
Նստել եմ կարմիր նժույգ,
Գալիս եմ՝ բռնեմ . . .

1926 թ.

ՀԻՆ ԱՅԳՈՒ ԴՌԱՆ . . .

Ախ, հին այգու դռան ես
Կնստեի տրտում,
Կիջներ գիշերն անեզր,
Այգում և իմ սրտում:

Բարակ կերգեր մի ծղրիդ,
Կխշշար ուռին,
Մի թուփ սիրով կտխրեր,
Կթեքվեր առվին:

Կանցներ ջրվորը առույգ,
Ջուրը կզնգար,
Կերգեր ամեն մի առու,
Ամե՛ն ծիլ ու քար:

Իսկ լուսինը ասես
Սաղմոս էր թերթում,
Երբ հին այգու դռան ես
Կնստեի տրտում:

1926 թ.

ԵԿԱՎ ԻՆՁ ԱՅՑԻ . . .

Եկավ ինձ այցի
Այսօր իմ հուշը.
Տխուր եմ, ասի,-
Աշխարհը մութ է:

- Հիմա ես, գիժ ես,-
Ասաց իմ հուշը․
- Կյանքը մոգի՛չ է,
Արև է, ուժ է։

Այրող այդ վերքը
Քո մեջն է մխում,
Երգի՛ր քո երգը,
Մի՛ լինի տխուր․․․

1926 թ․

ՀՈՒՇ [||]

Գարնան անձրևն է խշշում
Իմ հին տան վրա,
Ծանոթ մի երգ եմ հիշում,-
Հիշում եմ նրան։

Նա անձրևի պես թափվեց
Երգերիս այգում,
Ու բացվեցին վարդեր
Ու ծառեր ծաղկուն։

Թաց օշոշմեր կասկածի,
Տուղտեր մեղմության
Ուրախության ակացի,
Բարդիներ փարթամ։

Երգերի հորդ շատրվա՛ն
Խփեց իմ այգում,
Երգեց ջուրը երգահան,
Երգեց անքուն։

Հիմա այդ երգն եմ հիշում,
Հիշում եմ նրան․․․
Գարնան անձրևն է խշշում
Իմ հին տան վրա․․․

1926 թ․

* * *

Նույն գետն է աջից,
Գիշերը սև է․

Ջինջ, վճիտ աղջիկ,
Մեռավ քո սերը։

Խրխնջում է դռան
Ոսկեբաշ իմ ձին․
- Չե՛ս հասնի նրան,
Մի՛ նայիր սանձին․․․

1926 թ․

ՎԵՐՋԱԼՈՒՅՍ [|||]

Արտերը հագել են
Նարնջե յազմա,
Փռել են հանդերը
Ծաղկավոր պասմա։

Հոտերը տուն դառան
Հանդերից էլի,
Ու մաղվում է շաֆրան
Ամպերից, վերից։

Լճափում հարսնիք կա,
Հե՜յ, շարժեք ոտները,
Լուսինը թամադա,
Հարբե՜լ են գորտերը․․․

1926 թ․

ԱՆՁՐԵՎ Է ՔՈ ԱՅԳՈՒ ՎՐԱ

Թափվում է անձրև մի բարակ
Ոսկևոր աշնան ծառերին․
Ապրում էր իմ սիրտը արագ,
Ուզում էր զգալ կարելին։

Դու ագահ շնչեցիր, սի՛րտ իմ,
Ու որպես աշունքվա այգի՝
Փռեցիր սինին մրգերիդ
Ու հավաք չարիր դու, անգի՛ն։

Դրանի՞ց է, որ հիմա
Մոռացել ես խորունկ երգելը,-

Անձրև՜ է քո այգու վրա
Ու դրսում մրսում են մրգերը․․․

1926 թ․

ԱՆԴՈՐՐՈՒԹՅՈՒՆ [||]

Շուրջը անտառ է, մացառ ու թուփ,
Պուրակներ շուրջը, շրջող շողեր․
- Օ, փռվի՜ր, լուսե՜ խաղաղություն,
Կանա՜չ իմ, մա՜յր իմ, սե՜ր իմ շողե։

Շուրջը խարշափ է, շուրջը շրշյուն,
Այդ ծաղիկներն են մեղմ աղոթում,
Ու ծաղիկների քնքուշ շուշուն
Շրջում է արտում, հովտում, օդում։

Ես երազել եմ այս պահը, երբ
Ձուլվում է կյանքը թավուտներին,
Ու ծաղկի նման բազմաթերթ՝
Տրվում է շաղին, շողին, հովին։

Խորն է, անհատակ այս անուրջը,
Ջուրը մի ծանոթ երգ է հուշում․-
Այդ Մեծարենցն՚ է շրջում շուրջս,
Ու շե՜ր է հուշում հովի շուշուն․․․

1926 թ․

ՔԱՐԵ ՄԱՐԴԸ

Կբռնեմ հիմա այս կածանը,
Կկտրեմ ժպտուն ուղին երկար,
- Ընդունե՜ք այս սառը հուշարձանը
Եվ այս գլուխը վշտից թեքած։

Ճերմակ լուսինն է ինձ քանդակել
Անքուն և անքուն գիշերներով,
Քանդակել է պաղ ու անտարբեր․․․
- Հյուընկալ եղեք, եղեք ներող։

Այս հուշարձանը․․․ նա գալիս է,
Գալիս է դանդաղ, ու խեղճ, ու վեհ․

Շուրջը գարուն է ու մայիս է,
Ու նա ծեծում է դարպասը ձեր։

Եղե՛ք հյուրընկալ, եղե՛ք ներող,
Ընդունե՛ք քարե ճերմակ մարդուն,
Ծածկե՛ք գլուխն իր ծաղիկներով,
Ու թող երգի նա երգե՛ր արբուն։

Կգան նոր հյուրեր, նոր մայիսներ,
Դաշտերում կերգեն ուրի՜շ հովեր,
Հյուրընկալ եղեք, երբ գալիս են,
Գալիս են դանդաղ, ու խեղճ, ու վե՛հ . . .

1926 թ.

ԱՆԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Երեկո իջավ, ցո՛ւրտ է, քամի՛ է,
Անտառը շուծվեց խավարում քիչ-քիչ.
Ա՛խ, խորախոր է անջատման վիհը,
Ու չի ծածկի այն էլ ոչի՜նչ, ոչի՜նչ։

Ո՛չ զղջման արցունք, ո՛չ հերոսություն . . .
Այնտեղ, հին այգում, ննջում է խաղաղ
Նա, որն ինձ տվեց մեծություն ու թույն,
Որին հանեցի մի օր կախաղան-

Ինքս իմ ձեռքով . . . և անպատզարակ
Քաշեց ես նրա մարմինը լուսե
Ու թաղեցի հին խնձորենու տակ։

Անձրևը երգեց թաղման պատարագ,
Ու հոգիս այնպե՜ս հեկեկալ ուզեց,
Բայց ո՛չ մի կաթիլ արցունք չգտավ . . .

1926 թ.

ԴՈՒ ԵՐԱԶԵԼ ԵՍ

Դու երազել ես մի օր
Մի սեր արևազուն,
Եվ աչիկներ անդորր,
Ու շուրթեր հասուն։

Դու երազել ես, ու նա՝
Կյանքը շողոքորթ,
Մին ժպտացել է միայն
Ծարավի՛ դեմ քո։

Նա կարող է բողոքով
Ուղինե՛ր հարթել․
- Կյա՛նք իմ, կյանք իմ շողոքորթ
Թղթե վարդեր․․․

1926 թ․

ԳԻՇԵՐԸ

Ողջ գիշերը բարդիները
Խշշացին չափարի մոտ,
Ողջ գիշեր ականջում էր
Իմ սիրտը այդ ձայներին․
Ինձ կանչում էր ողջ գիշեր
Հնօրյա, հին մի կարոտ,
Կարկաչում էր մի անուն
Դաշտերից ու լայներից։

Ծնծղաներ էին ցնծում,
Բամբիռներ արծաթաձայն,
Ողջ գիշեր հովը պարեց
Ախ, այնքա՛ն, այնքա՛ն թեթև․
Ողջ գիշեր բռնել էի
Հնօրյա, հին մի կածան,
Ու շուրջս մեռած օրեր,
Ու մեռած ծաղկաթերթեր․․․

Ձեր երգը ի՛մն է նորից,
Ու հիմա, եչք գիշեր է,
Ուռչում է կարոտս խենթ
Ջրերի նման գարնան․
Ու այպես դեռ հեռու է
Ինձ թվում իմ աշունը,
Եվ օրերըս թևում են
Թեթև դեռ ու դեռ վառման։

Ձեզ հետ եմ նորից աճում,
Բարդինե՛ր, ճերմակ հարսնե՛ր,
Ցնորք իմ ոսկեհանդերձ,
Երկրային, անգին հմայք,-
Ես քո բերքն եմ ընդունել,

Քեզնով է միրգն իմ հասել,
Իմ երկրի վառման արև՛,
Նաիրյան ոսկե՛ քնար․․․

1926 թ.

ՕՐՈՐ, ՕՐՈՐ...

Արևավոր, արևավոր իմ սերերին,
Իմ հույզերին արևավոր ու նո՛ր, ու նո՛ր,
Իմ լույսերին ու լուսավոր իմ հույսերին,
Ընկուզենո՛ւն լայնասաղարթ, օրո՛ր, օրո՛ր,
Օրոր, օրոր։

Օրոր մարգին, արտույտներին, ծառին, ձորին,
Կածաններին իմ մենավոր, կանաչ բարդուն,-
Օրոր, քնքուշ իմ աքասի՛, օրոր, մորի՛,
Օրոր սարին, հանդին, արտին, օրո՛ր մարդուն,
Օրոր, օրոր։

Շամբուտներին ու ամպերին մութ ու անձև,
Անտառներին, արոտներին, քամուն, քարին,
Օրո՛ր սրտիմ իմ՝ արտի պե՛ս անձրևածեծ,
Օրո՛ր սրտին՝ վարդերի պես արնակարմիր,
Օրոր, օրոր։

Օրոր նրանց՝ արևային երգիչներին,
Որոնք մի օր երգ երգեցին ու անց կացան,
Կարդացողին օրոր - սրտոտ ու մտերիմ,
Կարդացողին, որ եղել է, հիմա չկա,
Օրոր, օրոր։

1926 թ.

ԵՐԵՔ ԲԱՐԴԻ

Խորենին

1

Երեք բարդի ես գիտեմ,
Նրանք նազում են իմ դեմ,
Օ, երեք բարդի․
- Մանկությո՛ւն իմ դեղնածամ,
Մանկո՛ւթյուն իմ, որ անցար
Նոր ցանած արտից․․․

Զանգի ղողանջ եմ հիշում,
Նեղ արահետ, անտառ, շուն
Ու գառներ ճերմակ․
Անհուշ լեռան մի ուսից
Բարձրացող վանք ու լուսին
Եվ ինչ-որ վրան։

Այդ բարդին շա՛տ է հեռու,
Նա մշուշվեց օրերում,
Յոթ սարից անդին․
- Մանկությո՛ւն իմ դեղնածամ,
Մանկո՛ւթյուն իմ, որ անցար
Նոր ցանած արտից

2

Երկրորդ բարդին, ահա՛ նա,
Բանուկ մի ճամփի վրա,
Երգուն ու խշշուն․
Շուրջը՝ գյուղեր, կանաչ ծով,
Առուն՝ անուշ զնգոցով,
Մարգեր թարմաշունչ։

Շուրջը երկիր մի զարթնող,
Անուշ բուրող հերկ ու հող,
Հազար կանչող ձեռք․
Դաշտի վրա լայնանիստ
Զարթնող ուժեր անհանգիստ,
Ակոսների երգ։

Լայնասաղա՛րթ իմ բարդին,
Զարթնող երկրի մեծ ճամփին,
Երա՛զ սպիտակ,
Դու շարժում ես ձեռքերդ
Ու երգում ես երգերդ
Բիլ երկնքի տակ․․․

3

…Երրորդ բարդին, երրո՛րդ ծառ,
Դեղնասաղարթ ու պայծառ,
Որ կռանում ես․
Նայում ես խոր ու բարի,
Հեռավո՛ր քո անտառից,
- Ի՞նչ է անունդ․․․

Դու ծերությունն ես անհուշ,
Շուրջդ մուժ ու աղջամուղջ,
Հողը՝ անհանդարտ,
Նա մռմռում է խանդից,
Եռում եռուն եռանդից,
Մնում նոր անտառ։

Կկռանաս դու մի օր,
Սրտամեռ ու գլխիկոր,
Կանաչ արտի դեմ․
Շուրջըդ, շուրջըդ կշափեն,
Նորից խինդոց կծափեն
Հազա՜ր բարդիներ։

Եվ օրերը հեռացած,
Ստվերների պես ծածան,
Կնստեն սրտիդ․
- Մանկությո՜ւնն իմ ոսկեծամ,
Մանկությո՜ւ իմ, որ անցար
Նո՜ր ծլած արտից․․․

1926 թ․

ԲԱԼԼԱԴ ՉԱԼՈՅԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

1

Չալոն իմ շո՜ւնն էր, չալ-չալ աչքո՜ւն էր,
Չալոն չքնաղ էր, պայծա՜ռ Չալո․
Ընկնում էր ոտիս, աչքը փակում էր,
Ծածկվում էր տատիս հին շալով։

Ես հանում էի մեր հին զգրոցից
Գույնզգույն լաթեր ու սրմա,
Զարդարում էի պոչից մինչև վիզ
Ու տանում դաշտեր նրան։

Չալոն քայլում էր պչրուհու նման,
Սլվլուն պոչը բռնած ցից,
Քսվում էր ոտիս, մռռում էր մռայլ,
Մռռում էր հպարտ, հաճույքից։

Տուն էի բերում մութ փողոցներով,
Շների աչքերից անտես․
Դանդաղ իջնում էր կապույտ երեկոն
Ու ծածկում սար ու դաշտեր։

2

Չալոն իմ շո՛ւնն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,
Չալոն չքնաղ էր, պայծա՛ռ Չալո,
Ընկնում էր ոտիս, աչքը փակում էր,-
Բայց բանը վերջացավ չարով:

Գաղթի մութ ճամփին կորավ իմ շունը,
Ո՞վ գիտե՝ ո՞ր ձին կոխոտեց...
Շուրջը մեռնում էր վերջին աշունը,
Չմնաց ինձ ո՛չ մի ընկեր...

3

Մի աղջիկ եղավ իմ երկրորդ սերը,
Խաժ աչքով աշխույժ մի աղջիկ,
Ոսկեգույն էին նրա մազերը
Ու բուրում էին դարչին:

Մի օր միասին գնացինք այգի,
Հուլիսյան գիշերն էր նազում.
Նա չալ-չալ շորեր ուներ իր հագին,
Իսկ այգում՝ խաղողն էր հասնում:

Նստեցինք մենք թավ որթատունկի տակ,
Նա դրեց գլուխը ծնկիս,
Ես շոյում էի նրա վիզը տաք
Ու նայում մշուշված դեմքին:

Օ, սե՛ր իմ, սե՛ր իմ...- ինձ հեռել էին
Բիբերը նրա մլարուն.-
Չալո՛ն է նայում նրա աչքերից,
Չալոն է տխուր նայում:

Անհուշ նազում են որթատունկերը,
Իսկ հետո անձրևն է խշշում.
Քեզ չեմ մոռացել, կորած ընկերըս,
Քեզ չեմ մոռացել, իմ շո՛ւն...

. . . .
. . . .

Օրերի հեռվում նրա հաչոցը
Հնչում է կարծես լալով...

Չալոն իմ շունն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,
Չալոն չքնաղ էր, պայծա՛ռ Չալո...

1926 թ.

ՊՈԵՏ

Մորս

Մի ջինջ գիշեր է եղել,
Մի ջինջ գիշեր,
Մայրս՝ ջահել մի եղեգ,
Հայրս՝ ուժեղ։

Բարդիներն են երգել
Ջրերի մոտ,
Ամեն ինչ խորն է եղել
Ամեն ինչ հորդ։

Ու մորըս հուզել է
Բարդիների երգը,
Իսկ դաշտերում փիրուզե
Ծղրիդներն են երգել...

Ախ, ծղրիդնե՛ր շատախոս՝
Լուսնկայի հետ,-
Ծնվեցի ձեր պատճառով
Այսպես պոետ...

1926 թ.

* * *

Այսօր ոգին հին երգի
Ծեծեց իմ դուռը,
Ու երբ բացի ես դուռը՝
Ընկել էր սեմին-
Ճերմա՛կ, ճերմա՛կ մի աղջիկ՝
Բերնին փրփուրը,
Թղթե ծաղկած մի պսակ
Դեղին վարսերին։

1926 թ.

ԿԱԾԱՆՆԵՐՈՎ

Որպես հանգած մի անուն

Երկնքի վրա,-
Այդ լուսի՛նն է դեղնագույն՝
Աչքերով մեռած:
Ու բարդիներն են շրշում
Գիշերների մասին,
Լսում է անշշուկ
Խոնարհ մասրենին:
Ճանապարհնե՛ր անհմա,
Քառուղիներ ձիգ,
Ու պարիսպներ հնամյա,
Վերձիգ. . .
Խաղաղ գիշերն է խոսում
Խոսուն ձայներով,-
Գնում եմ ես իմ լուսե
Կածաններով. . .

1926 թ.

ԲԱՐԴԻՆԵՐ

1

Ես փոքր էի դեռ, փոքր էի ես,
Աչքեր ունեի բարի ու մեղմ,
Արտերի ճամբին տեսա ես քեզ,
Դու այնքան աղջիկ, այնքան անմեղ:

Առաջին հանդիպում. . . և ինձ թվաց,
Որ նման ես դու ճերմակ գառի,
Ուզեցի քեզ հետ դաշտ գնալ
Ու հասնել ճերմակ բարդի ծառին:

Ուզեցի, բայց դու գնացիր տուն,
Ու երազ դարձար, դարձար վերհուշ,
Փռվեց գորշագույն մի իրիկուն,
Ու մի շուն հաչեց հեռվից հեռու:

Հետո գիշերը՝ անհանգիստ քուն,
Լուսնկա դաշտերը, դունչը գառիս. . .
Ես գնում էի մեր դաշտերով,
Ու չէի հասնում բարդի ծառին. . .

2

Արագիլներ եկան ու գնացին,
Եվ գարուններ անցան, դարձան նորից,
Հասկդ ձգվեց, որպես հացի,
Շուրթերդ կարմի՛ր, կարմիր մորի։

Գնացքը սողաց մթին ձորից,
Ինձ էլ վերցրեց, ճչաց, գնաց․
Իմ աչքը մնաց կանաչ շորիդ
Եվ քո մազերին ոսկետրցակ։

Ախ, իմ դաշտերը լայն ու արձակ,
Եվ մեր խրճիթը, կալը, դեզը -
Երազի նման եկան, անցան,-
Սպիտակ իմ գառ, թողի քե՛զ էլ․․․

Եվ օրորում էր իմ սիրտը թույլ
Անուշ շրշյունը հեռու արտի,
Ու գլխիս վրա խշշում էր խուլ
Դաշտերում թողած ճերմա՛կ բարդին․․․

1926 թ․

ՕՐԵՐ

Նորից օրեր են վառ, ու իմ սրտում
Հուրհուրում է քո հրահուրը,
Ու խոսքերը քո քաղցր ու տրտում
Կարկաչում են, որպես բարակ ջուրը։

Երգի նման մի վաղուց երգված
Հիշում եմ նորից այն որբ մանկան,
Որին աշխարհը հեքիաթ թվաց,
Ու նա սկսեց անհոգ ման գալ։

Այն վառ մանկիկը։ Թվաց նրան,
Որ լեռներից դեն չկա աշխարհ․
Երկինքը կապույտ, կապույտ վրան,
Չկա քաղցր միրգ մրգից աշնան։

Բայց երբ մեծացավ, դարձավ պոետ,-
Նա մրգեր տեսավ և քաղցր և դառն,
Ծաղիկներ ցանեց, երգ ու պոեմ,

Դարձավ իմաստուն մի պարտիզպան․․․

1927 թ․

ԱՇՈՒՆ

Աշո՛ւն, խաղող ես բերել,
Ոսկե տերև ու մշուշ,
Շրջազգեստներ բեհեզե,
Սեր ես բերել, աշո՛ւն,-

Ու տխրություն ինձ համար,
Ու տխրություն ինձ համար,
Ու տխրություն ինձ համար
Ու շո՛ւք։

Աշո՛ւն, լուսին ես բերել,
Ու անձրևներ սրտամաշուկ,
Ցանկապատի մոտ նստած
Դու մի դեղին, տխուր շուն։

Աշո՛ւն։

Աշո՜ւն, ինչպե՜ս ես մաշում՝
Խարտոցի պես պաղ ու խիստ․
Մեռել՝ ոսկե քո նաշում՝
Թող քնեմ խոր ու հանգիստ։

Աշու՛ն, խոսքեր ես բերել,
Ոսկե խաղեր ու ծնծղա,-
Ու տխրությու՛ն ինձ համար,
Ու տխրությո՛ւն ինձ համար
Ու մա՛հ․․․

1926 թ․

ՄՐԻՆԳԸ

Նա երգում է ամեն օր,
Նա ամեն օր լալիս է,

Սրնգահարը կույր ու խեղճ,-
Ու հեռու, է ու չկա
Նրա երգի մայիսը։

Ու կմեռնի՛ նա մի օր
Այդ մայթերի վրա պաղ,
Սրնգահարը կույր ու խեղճ,-
Ու փողոցը կդառնա
Նրա համար ցուրտ դագաղ։

Բայց այն, ինչ որ երգեց նա
Եվ ինչ երգում է հիմա,-
Սրնգահարն այն կույր ու խեղճ,-
Երկրիս հովերը կերգեն
Հովիտներում անուրախ։

-Երգե՛ր, երգե՛ր հնօրյա,
Սրնգահարնե՛ր կույր ու խեղճ. . .

1927 թ.

ԱՅԳԵՍՏԱՆՆԵՐ

Այգեստաննե՛ր մթին, սաղարթավոր ու վեհ,
Այգեստաննե՛ր, որնոք կարկամել են, տարվել
Բլուրների վրա ու բլուրներն ի վե՛ր. . .
Այգեստաննե՛ր։

Այգեստաննե՛ր հուռթի ու կատաղի, հզոր,
Բազուկներով կանաչ ու մրգերով դեղին,
Այգեստաննե՛ր, որոնք վարարել են այսօր,
Սպասում են սիրով իրենց հավաքողին։

Խնկանման խաղող ու տանձ, ու բալ, ու դեղձ,
Իմաստությո՛ւն՝ աշնան մրգերի պես հասուն,
Իմ մրգաստան երկի՛ր, մրգաստան իմ ե՛րգ,
Երգի նման անմահ, երգի նման ասուն. . .

Առե՛ք, առե՛ք երգըս ոսկեբառ ու հզոր,
Այգեստաննե՛ր բերքուն ու ձեր գիրկը տարեք. . .
Այգեստաննե՛ր, դուք, որ վարարել եք այսօր,
Այգեստաննե՛ր. . .

1927 թ.

ԱՌԱՋԻՆԸ

Ես վերջինը չեմ, հասկացե՛ք ինձ,
Եվ որբ կարոտն իմ վերջինը չէ,
Ախ, կծնվի դեռ այնքան թախիծ,
Այնքան վիհեր դեռ պիտի շնչեն։

Վերջին պոետը... դեռ չկա նա,
Նա պիտի գա դեռ, պիտի երգի
Ամեն մի երգն իր՝ հատու դանակ,
Ամեն մի երգն իր՝ մորմոք ու վերք։

Ողջո՜ւյն, ողջո՜ւյն քեզ, վերջի՛ն պոետ,
Եղիր հպարտ դու, եղիր լուսե,
Որքան խաչեն քեզ ու հայհոյեն-
Այնքան թող երգդ խորունկ հուզե։

Կգաս երկրիս խուլ մի անկյունից
Ու երգերը քո վեհ կհնչեն,-
Վերջինը չեմ ես, հասկացե՛ք ինձ,
Ու բորբ կարոտն իմ վերջինը չէ...

1927 թ.

* * *

Արև, շողերըդ գա՛րկ դու
Երգիս արտի վրա,
Թող շողա՛ քո նիզակը
Իմ սրտի վրա։

Շողա՛ թող շողըդ լուսե
Մայթերի վրա,
Թող անձրևները հոսեն
Վարդերիս վրա։

Արև, հրահո՛ւր թռչուն,
Օծի՛ր ինձ քո լույսով.
Վարդն անձրևով է շնչում,
Իսկ երգը – հույզով...

1927 թ.

ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ

1
Հիշո՞ւմ ես, հիշո՞ւմ ես՝ խշշում էր աշունը,
Ձմեռն սպասում էր մերկ սարից անդին,
Բուլվարի ծառերը խշխշում էին,
Բուլվարը նման էր հիվանդ...

Մեր հոգնած երակների խողովակներով
Փչում էր աշնան քամին ցրտացուրտ,
Նա մերթ եկեկում էր աղիողորմ
Ու մերթ էլ կատաղի ցնցում:

Նա ծվատում էր մացառ ու թուփ,
Հեկեկում խուլ ու տրտմաթախիծ,
Ամայի անտառում ու դեղնած դաշտում
Փնտռում էր գոնե մի ծաղիկ...

Անտառի տերևներն էին խշխշում,
Մահանում դաշտերն ընդարձակ.-
Հիշո՞ւմ ես, հիշո՞ւմ ես՝ աշուն էր, ինչպիսի՜ աշուն,
Ամառը շուտ անցավ, շուտ անցավ:

Շուտ անցավ ամառը.- նա միրգ էր ու հասույթ,
Նա հասուն օրերի բեղո՜ւն նախօրե,
Բայց եկավ աշունը, եկավ մահացուրտ.-
Օրեր իմ, օրեր իմ, օրե՜ր...

Լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես,- խշշում էր աշունը,
Ձմեռն սպասում էր մերկ սարից անդին,
Երգերի ծառերը խշխշում էին,
Ծառերը՝ նման հիվանդի:

2
Ես հիմա հիշում եմ բոլոր այն հուշերը,
Մեր բոլոր ճամբաներն անցած,
Այդ ամենը հիմա օրերում մշուշվել են,
Բայց դեռ խայթում են, որպես հանցանք:

Առաջի՜ն տերևաթափ, ահազին ու անկապան,
Այդ հո՜ղմ էր, փոթորի՜կ էր, սամո՜ւմ.
Տանջանքով երկնում էինք նոր երգի նոր ապագան,

Եվ այդ էր․․․ արյուն․․․ քամում․․․

Ես գիտեմ, որ ոչ մի աղջիկ չարժե մեր մեկ իսկ երգին,
Ոչ մի երգ՝ այս տենդի բերրի
Որ՝ երգի՛ պիտի փոխվեն արնահոս մեր վերքերը,-
Գարնան պես վառմա՛ն երգերի։

Եվ իզուր այն ճահիճը լուսնահար այլայլվում է,
Զառանցում է չարկամ ու խոցող,
Դեռ կանցնի՜ մեր երգերի երկաթե բատալիոնը
Վերելքի հզոր զնգոցով։

Բարեկա՛մ, մարտի՛կ, ընկե՛ր, ինչ լավ է, որ մենք կա՛նք դեռ,
Կարող ենք ուղինե՛ր հարթել,
Երգերի վեհ շառաչով ծառանալ հի՛ն ծառի դեմ,
Հասցնել նոր կյանքի վարդեր․․․

1927 թ․

«ԽԵՂՃ ԼԻԼԻԱՆ»

Սիրելի Ելիսեյին

Դու ապրում ես, դու ապրում ես, ու ես դեռ քեզ հիշում եմ,
Հիշում եմ դեռ քեզ,
Պաղ մարմարե սանդուխներից իջավ անշող աշունը,
Իջավ ու երգեց։

Անձրևածեծ մայթին ընկավ մի թիթեղե ցուցանակ՝
Շառաչով մի խուլ,
Մի կին, մթնում կանգնած, շոյե՜ց մատները բարակ
Ու ժպտաց տխուր։

Հետո մշուշ ու ստվերներ, ու մշուշում սպասող
Մի լապտեր կարմիր,-
Դաշնամուրը խռպոտ ու նենգ, դաշնամուրը խուլ մի հազով,
Ու մի պաղ մարմին։

Մի կանաչ կին, մի ոստիկան․․․ Տարան նրան փողոցով
Մի մութ, զարտուղի,
Ու լալիս են նրա սրտում ձները նուրբ ու խոցող
Ռեմբո Արտուրի[1]․․․

1926 թ․

ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆԻՆ

Հիմա մեզ մոտ ցուրտ է, ցուրտ է և հյուսիսում,
Ձյունն է ծաղկել հիմա շիրիմիդ եզրերին,
Ցավով մի անամոք ես քո մահն եմ հիշում,
Իմ հեռավոր եղբայր, Սերգեյ Եսենի՛ն:

Գիտե՞ս, գիտե՞ս արդյոք, որ քո մահից հետո
Նորից գարուն եկավ ու ծաղկեցին վարդեր,-
Որ տարիներ անցան ու դեռ կանցնեն հերթով,
Նույն արևն է վառվում հուրհրան ու վարդե:

Էլ ինչո՞ւ քեզ հիշել,- մի սիրելի անցորդ,
Որ շատ անգամ ճամբան մոռացել է, ծռել,
Խելագար մի նժույգ՝ ազատ թողած սանձով,
Մինչև որ մի գիշեր իր ուղեղը ցրեց . . .

Ցրեց քարքրուտի, ցրեց ժայռերի դեմ,
Ու դաշտերում մնաց սոսկ խրխինջը նրա,
Իսկ երբ առավոտը շողաց պարզ ու թեն՝
Լացի շիթեր կային ծաղիկների վրա:

Ծաղիկների վրա անօգ շիթեր լացի,
Հետո արևն ելավ լիմոնի պես լուսե,
Զարթնեց մեծ առօրյան ու որոտաց անծիր,
Հողը նորից արև ու նոր հունդեր ուզեց:

Անողոք է կյանքը, անողոք ու համառ,
Նոր ծաղիկներն հիմա նոր բույրով են զարթնել
Ու քո մահից հետո, իմ հեռավոր եղբա՛յր,
Նորից գարուն եկավ ու ծաղկեցին վարդեր . . .

1929 թ.

ԵՐԳ [|]

Կոմիտասին[1]

Սիրտս քեզնով լեզուն է,
Սիրտս այնպես,
Քո երգերը ցնծում են
Նուրբ ու անտես:

Եվ արտերի՛ն ոսկեվոր,

Արահետներին,
Երգում է երգըդ օրոր
Անցած օրերից։

Օրոր հանդին ու կալին,
Հասկերին օրոր,
Օրոր հոգնած մահճակալին,
Օրո՜ր, օրո՜ր։

Օրոր և քեզ, հեռավո՛ր,
Հեռավո՛ր իմ,
Օրորներիդ օրոր,
Երգիդ մտերիմ...

1927 թ.

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ [I]

Արփիկին[1]

Տեսնում եմ դեռ դեմքըդ բյուրեղ,
Քո ժպիտը մեղմ ու մարմանդ,
Շիրմիդ վրա լացող քույրեր,
Ուռենիները կյանքիդ գարնան.
Ու պրոֆիլըդ՝ լացեղ մարմար,
Խաղաղ, որպես անամպ եթեր,
Շիրմիդ վրա լուսե կամար
Ու թիթեղե ծաղկաթերթեր։

Անբառ երգեր շիրմիդ վրա,
Ծաղիկների նման կարմիր,
Հիշատակի կապույտ վրան՝
Անձնական ու անմարմին.
Սի՛րտը, սի՛րտը քո հուրհրան՝
Խոցված մահու դաժան տեգով,
Քո լուսավո՜ր շիրմի վրա
Մեծ պոետի խիղճը երգող[2]...

1928 թ.

ՀՈՒՇ [II]

Հովհ. Թումանյանի պայծառ հիշատակին

Անուշն է լալիս մշուշում,
Փախչում է Սաքոն դիվահար,
Ջրերում Դեբեդն է խշշում,
Արևը - բարձրացած վահան։

Ու հեռո՜ւ, հեռո՜ւ օրերից
(Մանկությո՛ւն, լուսե՛ մանկություն. . .)
Այնքան քաղցր կռվում են էլի
Շունն ու կատուն. . .

1929 թ.

ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Վաղուց լռել էր քո քնարը,
Շրջում էիր դու համր ու անկյանք,
Որպես քնարի կտրած լարը,
Որպես քնարի անշունչ պատյան։

Շրջում էիր դու, ծերո՛ւկ պոետ,
Աշունված երգով, մազերով արծաթ,
Միայն առօրյան դեմքըդ շոյեց,
Ու ոչ մի երազ ետ չդարձավ։

Անցան ու անդարձ. . . ու երբ բացվեց՝
Նոր կյանքի որոտան առավոտը,
Դողում էր երգդ ծվեն-ծվեն,
Ինչպես դողում է մահապարտը։

Անցար և անդարձ. . . մի անուն էլ,
Նայում եմ սառն, ասես անվիշտ.
- Բանաստեղծներնը ահանում են,
Իսկ երգը, երգը, երգը կա՛ միշտ. . .

1929 թ.

ԱՆՋԿՈՒԹՅՈՒՆ

Սիրելի Ավ. Իսահակյանին

Երազ տեսա ես.-
Նստել եմ էսպես

Ականջըս ձենի,
Մտքով խռնված,-
Ու ներս մտար դու
Զվարթ, ժպտերես,
Ուստա Կարոյի
Ականջից բռնած․․․

1929 թ․

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ [III]

Սուրենին

Այդ լուսի՞նն է խշխշում
Հնօրյա այգում,
Օ՜, նա փշուր-փշուր
Թափվեց իմ հոգում։

Մայր արագիլը մեռավ
Մեռա՜վ իր բնում,
Ձագը մենակ մնաց,
Ու էլ չի քնում։

Թեթև՜ լինի մագիլըդ
Սրտիս վրա․-
․․․Մենակ է արագիլը,
Կմեռնի՜ նա․․․

1930 թ․

ՄԱՀ [I]

Շիրիմիս վրա բուսած
Զվա՜րթ վարդենի,-
Այստեղ հանգչի գուսանն
Անափ արտերի։

Դաշտերում հով ու հն,
Կիջնի իրիկո՜ւնն էլ,
Կիջնի թախիծը սև
Հուշ դարձած հոգում իմ։

Ու հողի տակ պառկած՝

Կզգամ աճելը քո,
Կզգամ անձրևը թաց,
Կզգամ մշուշը գոլ:

Եվ ուշ մի իրիկուն
Կըգա վերջին սերըս,
Ու կնայի խոկուն՝
Ուսին իր հյուսերը:

Կնայի քեզ հուսատ,
Ջվա՛րթ վարդենի.
- Գուսա՛ն, պայծա՛ռ գուսան
Արտերի՛, արտերի՛ . . .

1929 թ.

ՄԱՀԱՋԱՆԳ

Այդ նա՛ է դաշտերի վրա,
Հովիտներում այս և այն ճամբի.
- Ընդունի՛ր մահըդ արհավրած,
Ընդունի՛ր հանգիստ:

Ծաղիկները պսակ կդառնան,
Ուղիները՝ խաչված ձեռքըդ,
Ու կերգե պատարագ թաղման
Սուլիչների համերգը:

Մեռնո՛ղ սեր վերջին հողվորի,
Կծնեն նոր սերեր խնդուն,
Փշե պասակո՛վ արևորվիր,
Փշե պասկո՛վ իմ դու:

Գիշերը կխփե սև վրան,
Լեռների վրա և այն ճամբի . . .
- Ընդունի՛ր մահըդ արհավրած,
Ընդունի՛ր հանգիստ . . .
1927 թ.

ԽՈՀ

Աշուն է դեղնապայծառ, ոսկեման ու ոսկեքող,
Աշուն է այգիներում, փողոցում և իմ սրտում,

Աշունը մի դեղնաթերթ ու տրտում վառ ու երգող,
Աշո՛ւն իմ դեղնապայծառ, ոսկեման ու ոսկեքող . . .

Ահա նա թոթափում է բշերն իր վառ ու ոսկե,-
Տեսնո՞ւմ ես, մեծացել եմ, ու հասել են բերքերն իմ,
Ու խորքից է խշխշում ընթացքը իմ երգերի,
Էլ չկա լաց ու երդում, էլ չկան զեղուն խոսքեր,-
Ահա նա թոթափում է բաշերն իր վառ ու ոսկե . . .

Ողջո՛ւյն քեզ, հասած մրգի, հասկերի՛ իմաստություն,
Շուտ եկար, շտապ եկար, բայց եկար անվերադարձ.
Հուշ բերիր ու մշուշներ ու արև մի ոսկեթաս,
Բերիր բորբ բերքերը քո, վեհությո՛ւն ու խոհ արթուն . . .
Ողջո՛ւյն քեզ, հասած մրգի, հասկերի՛ իմաստություն . . .

1927 թ.

ՕՐԵ՛Ր ԻՄ ՕՐՈՐՈՒՆ, ՕՐԵ՛Ր ԱՆՀԱՆԳԻՍՏ . . .

Հազար թելերով կապում եմ ինձ կյանքին,
Հազար թելերով՝ խորհրդային գարնան.
- Օրե՛ր իմ օրորուն, օրե՛ր իմ անհանգիստ,
Թող որոնումը ձեր՝ մորմոք չդառնա . . .

Դու քո հոգու աչքով պայծառ նայիր շուրջըդ,
Պարզահայաց եղիր և իմաստուն.
Հերոսաբար անցիր անցման այս կամուրջը,
Առաջավոր մարտի առաջավոր շարքում:

Հերոսաբար անցիր ու թող սիրտըդ, սիրտըդ,
Որ ցավում է աշնան այս թաց առավոտով,
Զրահավորվի՛ թող այս մարտնչումի բիրտով,
Ուրիշների բախտով պայծառանա . . ու թող

Կապվի նոր այս գարնան, կապվի հողին, հանդին,
Ու թող մորմոքը հին էլ ետ չդառնա . . .
- Օրե՛ր իմ օրորուն, օրե՛ր իմ անհանգիստ,
Հազար թելով կապված խորհրդային գարնան . . .:

1926 թ.

ՄՏԵՐԻՄ ԽՈՍՔԵՐ [||]

Ժպտում է այսօր քարը, հողը,

Գարո՛ւնդ է շնչում ամեն ինչում,
Ինձ զուրգուրում է քնքուշ շողըդ,
Ու քո անունն եմ մեղմ շշնջում:

Խաղաղություն քեզ, հայրենի՛ տուն,
Հայրենի՛ երկիր, հայրենի՛ սեր,
Ահա ես քո դեմ - սա՛ռն մի գիտուն,
Ե՛վ իմաստուն, մի մտասևեռ:-

Այսպես, մի՛շտ այսպես . . . օրորոցում
Միլիոն մանուկներ, միլիոն ծաղիկ,
Շուրթեր բորբոքված ժպտի բոցով,
Նայվածքներ պայծառ ու անթախիծ . . .

Այպես, մի՛շտ այսպես:- Եվ դո՛ւ, պոե՛տ,
Մե՛ծ հայրենիքի քաղաքացի՛,
Էլ բավական է շողեր շոյես,
Սիրես անձրևներ կամ ակացի:

Սիրի՛ր այն հողը որի վրա
Կանգնել ես, ու նա չի տրտնջում,
Սիրի՛ր արևը, ելքը նրա,
Գալի՛քը փնտռիր ամեն ինչում:

Եղիր արթո՛ւն դու, եղիր գիտո՛ւն,
Ու պայծա՛ռ եղիր, եղի՛ր լուսե . -
Խաղաղությո՛ւն քեզ, հայրենի՛ տուն,
Հայրենի՛ երկիր, հայրենի սեր . . .

1926. XI- 1927. II, Երևան

ԲՐՈՆԶԵ ԼՈՒՍԻՆ

Ես հավատում եմ այս առավոտին
ՈՒ մեն մի, մեն մի տրոփին նրա,
Որքան էլ սիրտս թախի՛ծը ուտի,
Քարե՛ր ծանրանան ուսերիս վրա:

Ես հավատում եմ այս առավոտին
Ու նրա համար դեռ ապրում եմ, կամ,
Քայլում եմ, մեջքիս ալ-կարմիր գոտի,
Ուղիներով այս և՛ նոր, և՛ երկար:

Ուղջո՛ւն, օ, ողջո՛ւյն ծիլերին այս նոր,

Ողջո՜ւյն քեզ, երկի՛ր, հույզերիդ լույսին․
Ողջունում եմ քեզ խնդությամբ բոսոր
Հզոր ու անմար, օ, բրոնզե լուսին։

Որքան էլ սրտումս ժանտաթերթ վարդեր,
Որքան էլ երգերս ցավով դժգունեն,
Ողջո՜ւյն, նո՛ր ծիլեր, արգավանդ արտե՛ր,
Կանաչ դաշտերի կարմի՜ր նժույգներ․․․

1927 թ․

ՄԵՌՆՈՂ ԶԱՆԳԵՐ

Հի՛ն ժամերի զանգեր,
Հի՛ն ժամերի զնգեր՝
Հովտում ու գյուղերում
Ու հյուղերի վրա,
Օ՜, հիսուսյան մրափ
Մռայլ ու ժանգակեր,-
Քաղաքների վրա։

Հի՛ն ժամերի զանգեր,
Որ հնչել եք մի օր
Օրորոցիս վրա,
Որպես դաժան օրո՜ր,
Թունավորել կյանքը
Ու բուրել խունկ ու մահ,-
Հի՛ն ժամերի զանգեր,
Որ հիշում եմ հիմա։

Հիմա՛ ամեն մի նոր
Օրորոցի վրա,
Որպես նոր մի օրոր,
Որոտում է ահեղ
Մեր առօրյա՜ն անահ․․․
Հի՛ն ժամերի զանգեր,
Որ մեռնում եք հիմա։

1929 թ․

ԳԱՐՈՒՆ

Անօգ ես այժմ, անսեր ես դու,
Անզոր են այժմ սեր ու երդում

Ու գալը նոր գարնան․
Ախ, ո՞ւր ես դու, սեր իմ, ոսկի՛,
Անուշ կսկիծ չասված խոսքի,
Գարուն իմ հուրհրան․․․

Լռում ես դու, լսո՞ւմ ես դու,
Հոգիդ բյուրեղ, սիրտըդ խնդուն,
Ու կյանքդ վառ, անգին, -
Հեռո՛ւ ես դու, հեռու իմ ցավ,
Ցնորք իմ լույս, անուշ անցած,
Կորուսյալ իմ հանգիստ։

Վառե՛մ հիմա ուրիշ կրակ,
Ուրիշ արյուն, ուրիշ երակ,
Ուրիշ հրով կիզեմ․
Հեռո՛ւ ես դու, առո՛ւ արծաթ,
Գարո՛ւն պայծառ, ա՛րտ իմ արձակ,
Անցավ, անցած իմ սեր։

Գարուն կգա, արյո՛ւն կգա․
Կանաչ արյուն, ավիշ ու կաթ
Կերգեն ուրիշ հյուղեր,
Ուրիշ սերեր, ուրիշ ձներ,
Ուրիշ թևեր դեռ կթևեն,
Կըգան ուրիշ հյուրեր․․․

Անօգ երգ իմ, անսեր էիր,
Անզո՛ր էիր, իզուր էիր,
Կախվել էիր թելից․
Գարնան դողն էր, հո՛ղը կանչեց,
Ո՞վ խուլ մնաց, ո՞վ չականջեց,
- Ելի՛ր, ելի՛ր, ելի՛ր․․․

1928 թ․

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ [||]

Ես գիտեմ՝ ոչ մի, ոչ մի ծաղիկ
Իմ արցունքով չէ, որ ապրում է,
Էլ ինչի՞ս է պետք մուժ ու թախիծ,
Էլ ինչիս է պետք քո համբույրը․․․

Ես շատ սիրեցի և շատերին,

Դաhիճ եղա ոմանց ու ոմանց զոh,
Ինձ մեղմ օրորեց փշատենին,
Ու ջուրը երգեց քաղցր ու գոh:

Ու ես ասում եմ, ասում եմ այժմ.
Խաղաղությո՛ւն ձեզ, օրեր անցած,
Ես իմ դեմ եղա այնքա՛ն դաժան,
Գործեցի իմ դեմ այնքա՛ն hանցանք. . .

Բայց նայում եմ ես նոր աշխարhին,
Այդ նա՛ է, - երգըս, որ hնչում է. . .

- Ես գիտեմ, գիտեմ՝ ոչ մի ծաղիկ
Քո երգերով չէ, որ շնչում է. . .

1926 թ.

* * *

Հասկե՞րն են խոր շշնջում,
Հասկե՞րը, թե սիրտը իմ.
Աշուն իմ, զվարթ՛ աշուն,
Հասար դու իմ կարոտին:

Ժպտում են hանդ ու արտեր,
Վառվել են hրով ներքին,
Բացե՛լ ես ահա hանդես,
Մտքերի՛, մրգի՛, երգի՛:

Աշո՛ւն իմ վառ ու վերջին,
Դաշտերի դեղնաբա՛շ ձի,-
- Թռչուն ես՝ անցա՛ր վերից՝
Արևի միրգը կտցիդ. . .

1930 թ.

ԻՆՉ ՀԵՏ [|]

Եվ գիտեմ ես hիմա, որ hամառ է,
Առօրյա աշխատանք է անդուլ
Այն ամենը, որ վարար, hողմավար էր,
Որ գալու էր երգով ու խանդով[1] . . .

Եղիշե Չարենց

Հիմա, երբ շուրջդ եռ է,
Վազք է լայնահուն,
Կարկաչում են ջրե՛րը
Դեռ քո ականջում:

Նրանք սերեր են երգում,
Լուսին ու մորի,-
Դու խնդությամբ ներքուստ
Լսում ես նորից:

Գիտե՞ս, պրե՛տ, որ կյանքում
Չի լինի ոչինչ
Լուսիններով անքուն,
Ու ջրերով ջինջ:

Աշխատանքով համառ,
Կրակով ներքին
Եկավ այս մեծ ամառը
Մրգի ու երգի:

Իսկ քեզ հուզում է դեռ
Դռնակն այն այգու,
Որի մոտ սիրտըդ երգեց
Կարոտով, անքուն:

Ոսկեմազիկ լուսինը,
Քայլքը աղջկա,
Նրա ոսկի հյուսերը. . .
Չի՛ եղել, չկա՛:

Ու չի եղել մի կյանքում,
Չի՛ լինի ոչինչ -
Լուսիններով անքուն
Ու ջրերով ջինջ:

Աշխատանքով համառ,
Կրակով ներքին
Եկավ այս մեծ ամառը
Մրգի ու երգի:

1930 թ.

ԱՆՁՐԵ [||]

Պսպղում են դրսում տատիս
Գուլպա գործող շղերը,
Մարգագետնի վրա, արտի -
Հողը ողողվել է։

Խաղաղության արծաթ անձրև
Իմ երկրի վրա,
Միրտս քո դեմ խորն եմ բացել
Ու քոնն եմ հիմա։

Ես շնչում եմ քո ջերմ բույրը,
Հողեղե՛ն մարմին,
Եվ այրող է իմ համբույրը,
Արնոտ ու կարմիր։

Գուրգուրում եմ հոգնությունդ,
Վարսերըդ ոսկի,
Հավատում եմ, հավատում եմ
Հասկերիդ խոսքին․․․

1927 թ․

ՈՂՋՈՒՅՆ ՔԵԶ, ՕՐ․․․

Սարսուռ հավախոսի,
Սահուն սահանք,
Սո՜ւս՝ խոսում է սոսին,
Սոսին բարձրահասակ։

Ահա սարի ուսին՝
Արծաթի պես սառ՝
Սպիտակեց լուսինը,
Սուզվեց որպես սուզակ։

Երգեց հովը – գուսան,
Ժպտացին դաշտ ու ձոր․
- Ողջո՜ւյն, արև ու սար,
Ողջո՜ւյն քեզ, օ՛ր․․․

1926 թ․

ՀՈՐԴՈՐ [||]

Բարդիներին ես ասի․

- Չեմ սիրում էլ ձեզ․
Ինչ երգեցի ձեր մասին,
Ծաղրեցին, իսկ ես -
Էլ չե՛մ ուզում զուր հուզում,
Էլ չե՛մ ուզում ձեզ․․․

Նրանք զվարթ խշշացին,
Ժպտացին վճիտ․
- Խե՛նթ, - ծիծաղեց աքասին,
Ասաց․ - միամի՛տ․․․

Երբ քնած ես լինում դու -
Գալիս են նրանք,
Երդվում են սեր ու խոստում,
Խնդրում են կրակ․․․

Երգիր երգըդ, ո՛վ պոետ,
Երգերըդ ամառ,
Մրգերի պես հոտավետ,
Կրքերի պես վառ։

Առատության եղջյուրից
Մենք քեզ տվինք այն,
Ինչ չեն տվել ոչ ոքի,
Ինչ քո՛նն է միայն։

Իսկ դու, թողած քո երգի
Նորքը բերքառատ,
Մտահույզ ու երկմիտ
Նայում ես նրանց։

Մոռացել ես դու անկամ,
Գանձերըդ թողած,
Ու ո՛չ մի, ո՛չ մի անգամ
Ձեռքդ չդողաց։

Երգի՛ր, երգըդ երգի՛ր,
Երգերըդ – ամառ,
Մրգերի պես հոտավետ
Կրքերի պես վառ․․․

1926 թ․

* * *

Սիրելի Ա. Խ.-ին

Ես երկրիս ձայնը լավ եմ լսում -
Ու պարզ տեսնում եմ նրա ուղին.
Նա ոչ նժույգ է, ոչ էլ մսուր,
Եվ ոչ զառանցնաք հին ու դեղին:

Երկրի, դաշտային կարմիր ծաղիկ,
Քո արմատները բերրի հողում,
Երկի՛ր, դու շնչող, կապույտ թախիծ, -
Քո բացվող օրն է իմ դեմ շողում...

Դու բարձրանում ես որպես միրաժ,
Բայց հոգի ունես, ունես մարմին,
Հառնում ես ահա որպես հրաշք,
Եվ որպես արև՝ հրակարմիր:

Հառնում ես մայթում, հանդում, արտում
Եվ խրճիթներում այս հողեղեն,
Ու տարածվում է ուժը մարդու
Հողերից վրա՝ որպես հեղեղ:

Ծլում է երգըդ նոր ու բյուրեղ,
Ու կբացվի նա ու, որպես վարդ,
Զվարթ եռանդով պիտի բուրե
Հողերի վրա նոր, արգավանդ...

Երկրային ներկա, նո՛ր առավոտ,
Նո՛ր ծիլեր՝ աճող բերրի հողում,
Իմ ելնո՛ղ երկիր, նո՛ր իմ կարոտ,
Քո բացվող օրն է իմ դեմ շողում:

1929 թ.

ՄՐԳԱՍՏԱՆ

Սիրել եմ մի օր քո երգը,
Երգերից կսկիծը նկուն, -
Երգերից դառնանուշ բերքը
Մարգերում, դաշտում, իմ այգում:

Մարգերում, դաշտում և այգում
Լացել է քո խուլ անձրևը,
Ու ես, պարտիզպան իմաստուն,

Թողել եմ հին այգու սեմը:

Երգել ուրիշ մի արևի տակ,
Ուրիշ մի արևով տարվել.-
Իմ երգի նո՞ր մրգաստան,
Իմ երկրի նո՞ր արև...

Հի՛ն հնձան, օ՛, լքված դու տուն,
Հին եղջյուր՝ մի շնչով ըմպած...
- Իմ երգի երկաթե՜ հարություն,
Որ դոփում ես ծանրասմբակ...

1930 թ.

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ [|||]

Նայիր հիմա՝ երկի՛նքը,
Նրա կամարին.-
Այս երգը երգեց ինքը՝
Գուրգեն Մահարին:

Դու մոռացար երգերըդ,
Մոռացվա՜ծ արդեն,
Ինչպես անցած հերկերի
Ժանտարթերթ վարդեր:

Երգ երգեցիր ու անցար,
Բայց վաղը, գիտեմ,
Կհամարվի այն հանցանք
Ու կլինի քեն:

Ու ոչ-ոք չի բարձրանա,
Ոչ ոք չի՛ ասի,
Որ քո հոգում կար և՛ մահ,
Ե՛վ լույս – միասին:

Որ այդ քո սի՛րտն էր տխուր՝
Ուրի՜շ տխրությամբ,
Շուրջը օրե՜ր հրահուր
Ու ելնող մի կյանք:

Նայի՛ր հիմա վերևը՝
Ամպերի՛ն այն գորշ,
Տե՛ս, ելնում է արևը,

Որպես վառ դրոշ:

Այդպես կանցնի քո երգի
Թուխպը առաջին,
Դու կձուլվես կրկին
Կյանքի շառաչին:

Ու էլ ոչ ոք չի հիշի
Երգերիդ մուժը մաշող,
Որ եղավ ծանր գիշեր
Ու մշուշ անշող:

Կերգի՛ երգիդ երկինքը՝
Որքան համառի,-
Այս երգը երգեց ինքը,
Գուրգեն Մահարին:

1926 թ.

ԵՐԳԻ ՊԵՍ

Անչար է իմ հոգին,- ես հիշում եմ նորից
Սիրով, ուրախությամբ, պատկերը քո անգին,-
Ու այս օրվա նման անեզր, անկրկնելի
Անչար է իմ հոգին...

Անչար է իմ հոգին քո չարության դիմաց,
Նույն առուն է զնգում անտառների խորքից,

. . . .
Անչար է իմ հոգին:

Իմ նո՛ր գարնան հմայք, նո՛ր այգ նո՛ր ցնորքի,
Մայիսների սիրով կարո՛տ եմ քեզ հիմա,
Տո՛ւր հանդերդ աստղե իմ նոր, բերրի՛ Նորքին,-
Անչար է իմ հոգին:

1926 թ.

ՏԽՐՈՒԹՅՈՒՆ [||]

Տխո՛ւր իմ տխրություն:
Անուշ իմ ցավ,
Մտար դու իմ սիրտը

Ու էլ չանցար։

Բա՛խտ իմ սևազգեստ,
Հարազա՛տ քույր,
Հնազանդ եմ քո դեմ,
Եվ կույր։

Համբուրում եմ ահա
Մատներդ պաղ,
Քո գիրկն ինձ համար
Շիրիմ ու բախտ…

1926 թ.

* * *

Կանցնի իմ երգը գարնան ամպի պես,
Ցողեր կմնան խոտերի վրա,
Մեռնող մրմունջներ, որ լոկ դո՛ւ գիտես։

Ա՜խ, շշուկներն էլ կհանգչեն մի օր,
Որպես մանկական օրոցքի վրա
Մայրական ժպիտ, մայրական օրոր։

1926 թ.

* * *

Դեռ զնգում է, գիտեմ,
Լայն ստվերում ձեր տան
Առուն երգուն ու մեղմ,-
Դեռ երգում է հիմա։

Բարդիները երկար,
Ծաղկանոցը դեռ թարմ…
Ջրի նման եկա,
Ջրի նման կերթամ…

1928 թ.

* * *

Արտերին նորից
Իջավ երեկոն.

Ելան հովերը թեթև երգերով,
Իջան սարերից ու անցան գետով:

Ջո՛ւր ես քաշում դու
Իմ հոգու հորից,
Խորունկ ջրհորից:-
Արծաթ դույլի մեջ աստղերն են խաղում,
Լուսի՛նն է մեռել կապույտ դագաղում...

1926 թ.

ՄՐԳԱՀԱՍ [||]

Ճռնչում են ծառերը
Ու հողը փարարել է,
Արևը, որ վառվել է՝
Ասես միրգ է արևն էլ:

Իմ երկի՛ր պայծառ ու վեհ,
Երգերս՝ քո մե՛կ մազին.
Հասել է ահա ձեռքս
Քո կարմիր մրգահասին:

1930 թ.

ԻՄ ԵՐԿՐԻ ՄԻ ՃԱՄՓԻ ՎՐԱ...

Իմ երկրի մի ճամփի վրա
Բարձրացավ երգերիս բարդին,
Նոյեմբերը ջրեց նրան,
Նոյեմբերը կոչեց կյանքի:

Շատ անգա ձեր ձիերն անցան,
Հանելով գորշ փոշի ու տոթ,
Կրծեցինք ճյուղերն իր կանաչ,
Ու թողին բունը՝ վերքոտ...

Հիմա բարձր են նրա ճյուղերը,
Չի հասնի նրանց ոչ մի դունչ,
Էլ իզուր են նրանք նայում վեր,
Եվ իզուր, իզուր են խրխնջում...

Կկտրե՛ն բարդին սղոցով,
Կշինեն սյուն մի անգրավ,

Քաղաքի բանուկ փողոցում
Կկանգնի նա հողում խրած․․․

Էլեկտրո – առավոտներից
Կգա նո՛ր մի պոետ անսաստ,
Եվ լամպն իր էլեկտրո-երգերի
Կդնի ճակատին իմ պարզ․․․

Սպիտա՛կ, սպիտա՛կ բարդի,
Իմ երկրի մի ճամփի վրա․-
Նոյեմբե՛րը քեզ կոչեց կյանքի,
Նոյեմբե՛րը ջրեց նրան․․․

1929 թ․

ԵՐԳ ՍՐՏԱՌՈՒՉ

Հայրենական արտերի
Ոսկի հասկերն եմ սիրում,
Արևը մեր մայրենի,
Այգեստաննե՛րը հեռու,
Այգեստաննե՛րը բերրի,
Այգեստաննե՛րը զվարթ,
Բույրը գարնան վարդերի
Ու ոսկեվոր հանդ ու արտ։

Ու բազուկը շինարար,
Ու բազուկը ստեղծող,
Ուժը գարնան պես վարար՝
Ու հեղեղի պեզ հզոր։
Ու նորաշեն շենքերի
Հայացքը պարզ ու լուսե,
Շողքը մանուկ դեմքերի,
Գարնանային երգ ու սեր։

Հայրենական իմ երկի՛ր,
Հայաստան իմ հարազա՛տ,
Թող չշաչի քո դեմքին
Ո՛չ մի օտար խարզան,
Ո՛չ մի բռունցք բռնակալ,
Ո՛չ մի տիրող ու չարկամ,
Ոչ ոք չի տա քեզ դրախտ՝
Ոչ հերոսը, ոչ արքան։

Բարձրացի՛ր, վեհ իմ երկի՛ր,
Ու շարքերով, ուս ուսի,
Կովկասյան սիպ լեռներից
Մինչև տայգան հյուսիսի,
Մինչև Վոլգան լայնահուն,
Կրեմլը մինչև անգրավ,
Հրազդանից մինչև Դոն,
Մինչև միգոտ Լենինգրադ։

Թող ողջունեն քո ելքը,
Սուլիչների երգը խոր,
Քաղաքների համերգը,
Ավանները հեռավոր,-
Շառա՛չը նոր ջրերի,
Ու ոսկեվոր հանդ ու արտ,
Այգեստաննե՛րը բերրի,
Այգեստաննե՛րը զվարթ։

1928 թ.

ԱՆԱՆԱԿ

Դու հիմա հեռու ես, գիտե՛մ,
Հուշերիդ մարգերը – ցանցառ.
Բայց գիտե՞ս, դեռ վառվում է քո դեմ
Իմ սերը – պայծառ ծիածան։

Եվ լացս ծունկերիդ վրա
Հիմա արտեր է ոռոգում,-
Եվ որքա՛ն թռչուններ մեռան
Այն հեռու օրերից քո հոգում...

Անանակը բլրի վրա
Շողշողաց գույներով թովիչ,
Դու սիրով նայեցիր նրան
Եվ սիրով աչքերից թողիր։

Իսկ հետո ամեն ինչ նո՛յնը.-
Ջրաղաց, և՛ արտ, և՛ տուն...
Հացենուն՝ ագռավի բույնը,
Ու զանգի ղողանջը տրտում։

Դու ասում էիր․- իզուր է,
Պոետը չի կարող սիրել․
Պոետը աշունքվա ճյուղ է,
Իր սերը՝ հողմավար տերև․․․

Իմ անուշ, անուշ իմ համառ
Դու եղար անչափ չար և խիստ,-
Տարիներ են անցել ահա
Ու ես քեզ սիրել եմ միշտ․․․

Գառներն են մայում իմ հոգում՝
Սպիտակ, սպիտակ ու թեն,
Քո կարոտն են նրանք երգում
Ու լիզում մուրը փայտե։

Իմ խոնարհ ու երգուն երկրում,
Ես՝ պոետ ու քաղաքացի,
Խնամում եմ պայծառ ու բերքուն
Երգերիս քնքուշ ակացին։

Եվ գիտեմ, որ պայծառ գալիքին
Ինձնից էլ կհյուսվի մի շող,
Այս փռվող հուներին ահագին,
Ուժերին անհուն ու քշվող․․․

․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․

Անանակը բլրի վրա
Շողշողաց գույներով թռվիչ,
Սիրով դու նայեցիր նրան,
Եվ սիրով աչքերից թողիր։

Իսկ իմ մեջ ոչինչ չի փոխվել,
Հիշում եմ խոսքերդ վարանած,-
- Դու միշտ էլ կիսատ ես թողել,
Կսիրես ու կմոռանաս․․․

1927 թ․

ԵՐԿՈՒՆՔ [|]

Դաշտերում սեզ ու ծաղիկ,
Հյուղերում որքա՜ն մանուկ․․․

Գալի՛ք իմ, լուսե գալիք,
Երկի՛ր իմ, ե՛րգ իմ անուշ…

Փռվում է իրիկունը,
Նման է գորշ մի վարդի,
Արևը կրակում է
Մոխիրե սարից անդին։

Իմ երկրի աստղերի տակ
Դեռ ծնվող որքա՜ն մանուկ…
Օ՛, երկունք խո՜ր ու հստակ,
Երկի՛ր իմ, ե՛րգ իմ անուշ…

1926 թ.

ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԾԱՌԵՐԻՆ

Տասնվեցամյա աղջիկների պես
Նրանք պայծառ են, նրանք՝ անուշ,
Հաճախ նրանք հետ զրուցում եմ ես,
Լսում են նրանք ու գլխով անում։

Գիտե՞ք, ասում եմ, ձեզ հետ միասին
Ես էլ տնկեցի իմ երգի ծառը,
Ձեզ հետ բարձրացավ և իմ աքասին,
Ձեզ նման նա էլ թարմ ու պայծառ է։

Հետո, ասում եմ, դուք դեռ կերկարե՛ք,
Կդառնաք վեհ ու սաղարթախիտ,
Ձեր շուրջը ուրի՛շ ոտներ կպարեն,
Ուրիշ սեր կլինի, ուրի՛շ թախիծ։

Դուք դեռ այնքան տարիներ ունեք…
Քամին կտանի ձեր նոր հունդերը,
Կփոխվի ջուրը, կփոխվեն հուները,
Բայց ձեզ կսիրեն նոր սերունդները։

Ժպտում են նրանք թարմ ու լիասիրտ,
Ու ես, նրանց հետ, սրտով պայածառ եմ.
- Գիտե՞ք, անուշնե՛ր, ձեզ հետ միասին
Ես էլ տնկեցի երգերիս ծառը…

1926 թ.

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ [||]

1

Աստվածամայրն է շրջում
Ջրերում այս խուլ,
Ննջի՛ր, մանուկ իմ վճիտ,
Ննջի՛ր, իմ տխուր։

Վանքն է կանգնել հնամյա,
Որպես կույր երգիչ,
Որի սրինգը մգլած
Ընկել է ձեռքից։

Ու փնտրում է նա իզուր,-
Ի՞նչ է փնտրում նա,
Միևնույն է՝ ոչ մի ջուր
Էլ ետ չի՛ դառնա։

Ու չի դառնա ոչ մի վիթ
Օրերից անցած,
Ինչպես որ չի ամոքվի
Ո՛չ մի սև հանցանք։

Եվ այս սայլը՝ վեր պարզած
Բազուկովն իր չոր,-
Ի՞նչ է, ի՞նչ է աղերսում,
Ապրում է ինչո՞վ։

Օրերն իր գորշ ու անդեմ
Ո՞վ է խռովել,
Ո՞վ է երգում լալու պես՝
Հեռվում հորովել. . .

2

Պիտի գա՛ նա, այն նորը,
Նա ծանոթ է ինձ,
Ու քշի այս ձորերից՝
Ինչ ցավ է, թախիծ։

Երկաթավոր կգա՛ նա,
Վեհ ու հրավարդ,
Ու կպարզվի երկրին այս

Հին ու հնավանդ։

Ու դաշտային առնետը
Կփախչի բնից․
Կշառաչի անտառը,
Կզրկվի քնից։

Ու գիշերվա խավարում
Կծաղկեն զվարթ
Էլեկտրական ծաղիկներ,
Էլեկտրական վարդ։

Իսկ հիմա նա՛ շրջում
Ձորերում այս խուլ․-
Նջի՛ր քո լույս մուրում,
Մանուկ իմ մաքուր։

Դու կզարթնե՛ս, կզարթնե՛ս,
Երբ զանգը վանքի
Ղողանջի խուլ տագնապով
Ու վախով կանգնի․․․

Դու կզարթնես, ու շուրջդ
Կժպտան զվարթ
Էլեկտրակա՛ն ծաղիկներ
Էլեկտրակա՛ն վարդ․․․

1929 թ․

ԵՐԿԻՐ [||]

1

Բարձրանում է քո դեմքը հրաշուշան ու բոսոր,
Մեր դաշտերի վրա լայն, պայծառանում նորից-նոր։

Այստեղ երկաթը երգեց, այնտեղ պղինձը ճչաց,
Հնամենի ձորերում կանչեց ահա մի շչակ։

Ո՞ւր են, ո՞ր են թաքնվում արահետները վախկոտ,
Երբ արշավում են համառ պողոտաները հաղթող։

Պողոտաները հզոր, պողոտանե՛րն անողոք,

Նրանց դեմ ո՛չ մի տրտունջ, նրանց դեմ ո՛չ մի բողոք։

Թող ծղրիդները երգեն իրենց երգը հնամյա,
Երկաթավոր իմ դարում ոչ մի երգ չի՛ դիմանա։

Երբ արշավում է նորը, հրավառն ու վիթխարին,
Ծղրիդները թող չերգեն, ու թող լուսինը մարի՛։

Երկաթավոր իմ դարում ո՞ւմ ինչ՝ լուսինը կավճոտ,
Ո՞ւմ ինչ՝ խոնավ խորշերում ծղրիդի երգը տանջող։

Այստեղ երկաթը երգեց, այնտեղ պղինձը ճչաց,
Հնամենի ձորերում կանչեց ահա մի շչակ։

Էլ ինչո՞ւ են թաքնվում արահետները վախկոտ․-
Արշավո՛ւմ են ծանրաքայլ պողոտաները հաղթող․․․

2

Երկաթավոր մի բազուկ մի նոր աշխարհ է կռում,
Մի նոր երկիր է երկնում նաիրական իմ երկրում։

Գիտեմ, գիտեմ՝ կտխրեմ այնքա՛ն պուրակ ու լեռներ,
Անտառնորում տխուրաչ եղնիկնե՛րը կմեռնեն։

Թող անտառնե՛րը ողբան նրանց մահը նորօրյա,
Երկաթավոր իմ դարում նրանցից ի՞նչ կմնա։

Երբ արշավում է ծանրը, հրավառն ու վիթխարին,
Երբ կա պայքար ու կռիվ՝ բազկի, հողի ու քարի։

Հողաշերտե՛րն են դողում ստորերկրյա մի դողով,
Արշավում են, արշավում պողոտաներն անողոք․․․

Այստեղ երկաթը երգեց, այնտեղ պղինձը ճչաց,
Երեկվա նեղ ձորերում կանչեց ահա մի շչակ։

Եվ իզուր են թաքնվում արահետները վախկոտ,
Արշավո՛ւմ են աննահանջ պողոտաները հաղթող․․․

1926 թ․

ՆԱՄԱԿ ԵՐԿՐԻՑ

Սիրելի Ե-ին

Նույնն է երկիրդ հիմա
Արտեր ու վարդեր,
Նույն կարոտն է ալ ու վառ
Նույն խնդումը թեժ:

Հեռո՛ւ, հեռո՛ւ Բարիզի
Մենի եզերքում,
Գիտեմ, կարոտով անծիր
Երկիրդ ես երգում:

Գիտեմ տենչը քո հուր,
Ցանկությունդ վառ,
Գիտեմ թե ի՛նչ ես խորհում
Մե՛ծ հողի եղբայր:

Սուր սրսփում է Մենը,
Գրում ես անքուն,
Ու կարծում ես թե՝ է՛ն է,
Զանգուն է զնգում . . .

Ու կարծում ես թե – էս է,
Քո երկրում ես դու,
Նրա խոսքը կլսես
Հրե ու խնդուն:

Պարզվում ես գոհ ու հստակ,
Ժպիտով ոսկուն . . .

. . . .
Կամուրջների բեռան տակ,
Մենն է սրսփում:

1926 թ.

ԶԻԿ-ԶԱԿՆԵՐ

Կանչում է հո՛ղը, հո՛ղը,
Բուրում է բարկ,
Եվ օրը բաց է թողել
Լույս ու կրակ:

Խրխնջում է զարունը
Խրճիթիս դռան,

Արևը այրվում է
Սարի վրա։

Հազա՛ր-հազա՛ր մոլորված,
Իմ երկրից հեռու,
Հազա՛ր-հազա՛ր օրորան,
Ու հազար առու։

- Ո՞ւր եք, ո՞ւր եք և ո՞վ եք,
Եվ չկա՞ դարձ․․․-
Կանչում է հո՛ղը, հո՛ղը,
Կողերը՝ բա՛ց․․․

1926 թ․

ՀՈՂԻ ԿԱՆՉԸ

Մեծ քաղաքների խուլ խուժը
Կանչում է նորից անհանգիստ․
Մշուշում թարթում է կամուրջը՝
Հայացքը հառած իմ հանդին։

Իսկ անդին գյուղերն իմ անթև,
Իսկ անդին հիվանդ մի տենդով
Հյուղերն են իմ ճամբան բանտել,
Հողերն են դժգոհ մրթմրթում։-

- Բավակա՛ն է որքան շրջեցիր
Քաղաքից-քաղաք երգելով,
Տե՛ս, ձեթի ճրագը շիջել է,
Սերմեր են մեռնում հերկերում։

Կոպերիդ տակ կապույտ երիզ,
Մազերիդ՝ բույրը զինետան,
Իմ կորած զավա՛կ, էլ հերի՛ք
Մնաս քո երկրին օտար։

Դու այստեղ ուրի՛շ կլինես,
Կգտնես քո երգի հունը,
Կսիրե քո նոր երգերը
Բարձրացող զվարթ սերունդը։

Ձեզ այստեղ ճանաչում են նրանք,
Երգում են քո նոր երգերը,

Իսկ դու թափառում ես մռայլ,
Ու նեղ է թվում երկիրըդ։

Միննույն է՝ որքան էլ փախչես,
Ցնորես քաղաքներ հսկա,-
Քեզ հո՛ղըդ պիտի ճանաչե,
Քեզ հո՛ղըդ պիտի զգա։

Եվ Հայաստանն է քո հերկը,
Ուր պիտի երգըդ զրնգա․
- Դու երգի՛ր, պոե՛տ, քո երգը
Եվ պայծառ եղիր, և զգաստ։

1925 թ․

МՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ [III]

․․․Նույն ամառն է, նույն փոշին․․․ ախ, հասկացիր ինձ հիմա,
Ես լոկ քե՛զ եմ որոնել իմ օրերում անիմաց,
Ես լոկ քե՛զ եմ օրորել ցնորքներում իմ լուսե,
Ու տրտմաթավ քո շնչով՝ իմ այս երգերը հուզել։

Կգա աշունը դեղին, տերևներով ոսկեգույն,
Մուժ կլցվի իմ երգում ու անապակ քո հոգում,
Բայց կմնաս դու էլի նո՛ւյն փառքով ու թարմությամբ,
Վերջալույսում լողացող գարնանային ոսկե՛ ամպ․․․

Եվ երգերը քո խորունկ ու վերքերդ մանավանդ,
Ես կպահեմ իմ հոգում, որպես անխաբ մի ավանդ․
- Երկի՛ր, երկի՛ր իմ լուսե, ընդունիր հուրը հետին
Ու երգերը փիրուզե քո զանգրահեր պոետի․․․

1925 թ․

ԴԱՇՏԵՐԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ

Տեսնում եմ դեմքըդ չուգունե,
Քայլերըդ երկաթածանր,
Գիշերը դանդաղ շոգում է
Ջրերի վրա բարձրացած։

Գալիս ես, զալի՛ք իմ, և ահա
Դոփում ես հողի թմբերին,

Քայլում ես դաշտերի վրա,
Արտերի կողքով անբերրի:

Զգում եմ այնքա՜ն մոտիկ,
Որ կարծես եղբայրս է ձիավոր,-
Նա, մեջքին ալ կարմիր գոտի,
Արշավում է դեղին դաշտերով:

Սպասում, սպասում եմ ես քեզ,
Գյուղաստան երկրիս հետ միասին,
Մութ գոմում բանտարկված խոյի պես,
Կարոտում եմ հզոր քո լույսին:

Զայնո՛ւմ ես դաշտերի մուժից,
Այդ դո՛ւ ես քո նոր երգերով,
Ես տեսնում եմ բարձրացող փոշին,
Տեսնում եմ՝ տալիս ես զրոհ:

Եվ զգում եմ այնքա՜ն մոտիկ.-
- Եղբա՜յրըս, եղբա՜յրըս ձիավոր,
Կապել ես ալ կարմիր գոտի,
Արշավո՛ւմ ես դեղին դաշտերով...

1925 թ.

ՓՇԱՏԵՆԻ

1

Տեսել ես շատ անգամ,
Տեսել շատերին,
Ճամփի եզրին կանգնած
Փշատենի՛:

Նախիրներ ես տեսել՝
Դեղին, թոզոտ,
Հոգնած հնձվոր ու սել՝
Արտից դարձող:

Ու մնացել ես մենակ
Տխրությամբ ջինջ,
Եկել, անցել են նրանք.-
Քեզ ի՞նչ, քեզ ի՞նչ...

Կելնի արևը հրակ
Ու կիջնի կույր,

Մոխրահեր ու մռայլ
Կմնաս դու...

Դու կձգվես լուսնին
Ծաղկուն ու նայ,
Երբ լեռների ուսից
Բարձրանա նա։

Ու կնայես նրան
Սառն ու արթուն,
Կելնես մի ոտի վրա,
Կպարես դու։

Դաշտում մեկը կսրի
Մահու ուրագ,
Բայց կպարես դու անվիշտ
Ու կենսուրախ...

2

Փշատենի՛ անհույս,
Անհուշ իմ ծառ,
Ահա օրե՛ր անուշ,
Օրեր պայծառ։

Իմ երկրի հանդերում
Ոսկի հասկեր,
Կյանքը, կյանքը խնդուն
Վա՛զք է, վա՛զք է։

Վրնջացող ձիեր
Խճուղու վրա,
Խփել է արևը
Նարնջե վրան,-

Եվ դաշտերից մշուշոտ
Գծով ուղիղ,
Ահա գալիս է շոգ-շոգ
Երկաթուղին։

Ա՛խ, փշատի, իմ թուփ,
Ե՛րգ իմ վարդե,-
Անձրևի տակ ժպտուն
Վարդե՛ր, վարդե՛ր...

1925 թ.

ԵՐԿԻՐ [|||]

1

Ես ինձ երգում եմ քո մեջ, երկի՛ր
Իսկ քեզ՝ անկաշկանդ իմ հույզերում,
Եվ դրանից չէ՞, որ իմ երգը
Այսքան հորդուն է ու հորձանուտ։

Դրանից չէ՞, որ ջերմ է շնչում,
Ինչպես կեսօրվա այն քամին է,
Որ, չո՛ւ, թռչում է դաշտերի միջով․․․
Եվ այն, որ խորն է, մարդկային է․․․

Այս լեռնաստանի բավիղներում,
Ու մեր դաշտերում տրտմաթախիծ,
Ու գյուղերում մեր համր ու ներուժ,-
Իմ երգը անզոր ու կատաղի․․․

Իմ երգը պետք է լիներ դրոշ,
Լիներ սավառնակ, կամ հրետանի,
Քո օրերի պես պարզ ու որոշ,
Եվ ոչ թե դաշտեր ընկած քամի․․․

Ու ես զգում եմ, զգում եմ, օ՛,
Տխրությունը քո՝ սրտին իմ մոտ,
Ու իմ հույզերում երգուն ու նոր
Խարանվում ես դու, որպես ամոթ․․․

2

Երկի՛ր հյուղերի, պսա՛կ հասկե,
Եթե պետք է քեզ անվերջ գովել,-
Ես էլ կգտնեմ ոսկի խոսքեր,
Խոսքեր, որ չունի ոչ մի պոետ․․․

Եվ մի՞թե այդ է քեզ հարկավոր,
Եվ կարո՞տ ես դու նրան միթե՝
Հաճույքին այդ խեղճ ու անկարող,
Ու խնդությանն այդ սին ու թեթև․․․

․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․

Հիվանդ է հոգիս քո ցավերով,
Երկաթի սերը տանջում է քեզ,
Կարոտս խորն է ու ավերող,
Իսկ քո թևերին աթար ու դեզ․․․

Դեռ զարշ հյուղերն են քեզ գուրգուրում,
Ախ, այդ թախիծն է ինձ օղակել,

Ահա՛ թե ինչու իմ երգերը,
Չեն կարող բարձր աղաղակել․․․

Ես շղթայված եմ քո ներկային,
Երկի՛ր հյուղերի, սեր վառման,
Դանդաղ սայլերին քո երկանիվ,
Ջրին, հողին ու քո գարնան․․․

Քո խոփն է կիսել սրտիս հերկը,
Քո բույրն եմ շնչում մոտ ու ծանոթ,-
Եվ դրանից է, որ իմ երգը
Այսքան հորդուն է ու հորձանուտ․․․

1925 թ․

ԽԱՉՎՈՂ ԹԵՎԵՐ

Կանչի՛ր, կռունկ, կանչի՛ր,
Քանի գարուն չկա,
Աշնան նման տխուր
Կանչի՛ր, խե՛ղճ իմ թռչուն․
Քամիներն են երգում
Արձակ դաշտերն ընկած,
Հողը սուս է արել
Ու կարծես չի շնչում։

Իսկ երբ դառնաս նորից
Գալիք նորոգ գարնանն,
Ուրի՛շ օր կլինի,
Ուրիշ երգ ու խնդում․
Ոչ ոքի չի հուզի
Քո կռինչը վառման,
Ու երկնքի ֆոնին
Խաչված կմնաս դու․․․

Ներքև, ոտներիդ տակ
Աստղե՛ր, որքան աստղեր,
Վերևում էլ աստղեր,
Օ՛, աստղային դագաղ․
Ո՞վ է այդքան լույսեր,
Լույսեր վառել այնտեղ,
Երեկ դաշտեր էին
Ոտներիդ տակ ընկած։

. . . Մուժ կպատի հետո,
Ու երկնքի վրա
Աստղերը չեն փայլի
Ու չեն երևա էլ.
Մի անգամ էլ կերգես,
Կկոնչաս վիատ,
Ու մոլորած ուղիդ՝
Կշպրտվես ներքև. . .

Հիմա՛ր, հիմար թռչուն,
Աստղե՞ր կարծեցիր դու,
Ինչ-որ մենք մեր ձեռքով
Վառել ենք ու վառում.
Դրանք նոր գյուղեր են՝
Լուսավոր ու խնդուն,
Ու բացվել է այնտեղ
Էլեկտրական գարուն։

Իսկ դու հիմա երգի՛ր,
Քանի գարուն չի դեռ,
Աշնան նման տխուր
Կանչի՛ր, խեղճ իմ թռչուն,
Դեռ ծաղիկներ ունենք,
Ունենք սեզ ու թիթեռ,
Դեռ լուսինն է փայլում
Գիշերային լճում. . .

1927 թ.

ԿԱՐՄԻՐ ՄԱՐՏԻԿԻ ՕՐԱԳՐԻՑ

Զնգո՛ւմ է նորից հուշերիս առուն
Այս ուշ գիշերում,
Եվ իմ հուշերում
Բացվո՛ւմ է ահա մի շքեղ գարուն։

Մեր խումբն էր երգում մթին անտառում
Մեր շուրջը խավար,
Ավեր ու ավա՛ր,
Առաջը՝ կռիվ, մա՛հ ու մաքառո՛ւմ։

Երգո՛ւմ էինք մենք երգը գալիքի
Եվ մակընթացը վերջին ալիքի։

1932 թ.

ՎԵՐԱԴԱՐՁ [|||]

Մոտեցավ հանգիստ ու դուռը թակեց,
Մայրը բաց արավ դուռը ահառած,
Որդին էր մթին սարերը փախած,-
- Փախի՛ր, մի՛ մնա ու ազատի՛ր քեզ . . .

Նա զենք էր կապել, շինել էր հագել . . .
- Մայրի՛կ, աշխարհին արև՛ է ծագել . . .

1932 թ.

ՀԱՏՎԱԾ

Եկավ սև ձիավորը,
Հասավ գյուղի տակը,
Ասաց իր ազգանունը,
Քաշեց մտրակը:

Ասաց.- Կանգնե՛ք կռվի,
Թշնամին մոտ է.
Հողվո՛ր, սուրդ սրի՛,
Կտրի՛ր նրա ոտը:

Պայթեց մի հրացան,
Ընկավ ձիուց վար նա,
Եվ արևը բարձրացավ
Աշխարհի վրա . . .

1932 թ.

ՇՈՒՐ ՍԱՐԻ ԲԱԼԼԱԴԸ

-Ինչո՞ւ ես լուռ, մայրիկ . . .

- Ես հիշում եմ հիմա
Կռիվը Շուր սարի,
Երբ արյուն էր ու մահ . . .

- Ի՞նչ ես տխուր, մայրիկ . . .

-Քանի՜ կտրիճ ընկավ,
Շուր սարերի լանջին,
Քանի՜ կրակ հանգավ . . .

-Դու լալի՞ս ես, մայրիկ . . .

-Ծաղիներն են կանչում
Շուր սարերի լանջում,
Շուր սարերի վրա
Մի օր ընկան նրանք,
Հանգան որպես կրակ. . .
Ա՜խ, մնացին անտես
Այս արևին կարմիր,
Որ բարձրացավ, ասես,
Շուր սարերի լանջից. . .

- Դու ժպտո՞ւմ ես, մայրիկ. . .

-Շուր սարերի լանջում
Ծաղիկնե՜րն են կանչում. . .

1932 թ.

КԱՐՄԻՐ ՁԻԱՎՈՐԻ ՄԱՀԸ

(Փոխադրություն)

Գետը հոսում է.
Գետի հայելում՝ լալկան ուռիներ,
Այնտեղ լվանում են իրենց վարսերը
Լալկան ուռիները,
Ուռիները։

Ձիավորները կարմիր։
Մերկ սրերը ուռիներին խփելով,
Արշավում են դեպի մայրամուտ
Որպես քամի։

Ու հանկարծ, հանկարծ,
Որպես թռչուն վիրավոր
Մեկն իր ձիուց գլորվեց ցած։

Չաղաղակեց նա, չգոռաց,
Արշավողներին չկանչեց ետ,
Միայն նրանք ձիերի
Շողշող պայտերին նայեց,
Աչքերը՝ լեցված։

Էլ նա չի՛ փարելու,
Չի՛ փարելու
Քառասմբակ արշավող
Իր նժույգի բաշերին փրփուր,
Բաշերին,

Էլ նա չի կարող,
Չի կարող,
Խաղացնել իր սուրը՝

Ճերմակների հետնից
Գիշերով․․․
Դանդաղ մարում է պայտերի ձայնը,
Եվ արևմուտքում ձուլվո՜ւմ են, ձուլվո՜ւմ
Ձիավորները․
Ձիավորները՝ զինվորնե՜ր կարմիր,
Հողմաթև ու թեթև՜ ձիավորները,
Ձիե՜րը հողմաթև,
Ձիե՜րը թեթև,
Ձիե՜րը,
Ձիե՜րը,
Ձի՜․․․[1]

Գնա՜ց մի կյանք՝ ձիու նման հողմաթև․․․
Լռեց և ձայնը գետի,
Ու ստվերներ մթնեցին,
Ու ջնջվեցի՜ն գույներ,
Ու վարագույրն իջավ ծանր ու սև,
Նրա կապույտ աչքերին․․․
Նրա խարտյաշ մազերին
Ողկույզնե՜րը փռեցին
Լալկա՜ն ուռիները,
Ուռիները․․․

Մի՜ լաց, մի՜ լաց, ուռենի՜,
Կարա- Սույի հայելում
Ձեռք մի՜ կցի,
Լաց մի՜ լինի,
Ուռենի՜․․․

1927 թ․

ԺՊԻՏ

Ոմանց: Իմ քննադատներին

Բայց ինչո՞ւ մանր, կույրե՞ր եք միթե,
Ես խոշոր, խոշոր բուրժուական եմ,
Եվ իմ երգն է իմ հաստությունը,
Դրամագլուխը, հիմնական:

Շահագործել եմ ես բարդիներին,
Նրանց բողոքին անզիտակ,
Քնից զրկել եմ արազիլներին,
Հանդերն եմ առել հանգի տակ։

Ոսկե հասկերի խշշուն ծփանքից
Քամել եմ արժեք հավելյալ,
Մասրենիներին չեմ թողել հանզիստ,
Նրանցով շահել կապիտալ։

Ու զանձե՛ր ունեմ ես անհատնելի,
Լճերում բացել եմ վարկեր,
Մերկացրել եմ ջահել թփերին.
Լուսնի հետ քեֆե՛ր եմ սարքել...

Էլ ինչո՞ւ մանր, կույրե՞ր եք միթե,
Ես մեծ բուրժույ եմ անկասկած.
Եվ գործադուլ են պատրաստում իմ դեմ
Հացենին, անձրևն ու ակացիան...

1929 թ.